ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Համագործակցության մասնակից պետություններ,

հիմնվելով 1992 թվականի փետրվարի 14-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջեւ զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական եւ իրավական երաշխիքների մասին եւ 1992 թվականի մարտի 13-ի՝ Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին Համաձայնագրերի վրա, ցանկություն արտահայտելով համագործակցելու զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց եւ նրանց ընտանիքների սոցիալական ապահովության բնագավառում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Անկախ Պետությունների Համագործակցության Սահմանապահ զորքերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը ու պարտադիր պետական ապահովագրությունը իրականացվում է այն պայմաններով, նորմերով եւ կարգով, որոնք սահմանվում են Համագործակցության մասնակից պետությունների օրենսդրությամբ, որոնց տարածքներում բնակվում են նշված զինծառայողները եւ նրանց ընտանիքները: Նախքան տվյալ հարցերով այդ պետությունների կողմից օրենսդրական ակտերի ընդունումը, գործում է նախկին ԽՍՀՄ օրենսդրությունը:

ՀՈԴՎԱԾ 2

Համագործակցության Սահմանապահ զորքերի եւ պետությունների սեփական Սահմանապահ զորքերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը իրականացվում է Սահմանապահ զորքերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության գոյություն ունեցող համակարգի միջոցով: Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության եւ զինծառայողների պարտադիր պետական ապահովագրության վրա կատարվող ծախսերը իրականացվում են մասնակից պետությունների կողմից իրենց բյուջեների հաշվին՝ առանց փոխադարձ հաշվարկների:

Սույն Համաձայնագրով նախատեսված կենսաթոշակային ապահովության պայմանները, նորմերը եւ կարգը տարածվում են նախկին ԽՍՀՄ սահմանապահ զորքերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների վրա:

ՀՈԴՎԱԾ 3

Սահմանապահ զորքերի զինծառայողների կենսաթոշակների նշանակման տարիների վաստակին հաշվառվում է Զինված ուժերում եւ այլ զինված կազմավորումներում ծառայությունը (այդ թվում՝ արտոնյալ պայմաններով) Համագործակցության այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքում զինծառայողները անցել են ծառայությունը:

Սահմանապահ զորքերի զինծառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին կենսաթոշակների նշանակման համար դրամական դրույքաչափերը սահմանվում են Համագործակցության այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքներում բնակվում են զինծառայողները եւ նրանց ընտանիքների անդամները:

ՀՈԴՎԱԾ 4

Համագործակցության մասնակից պետությունները փոխանակում են տեղեկություն իրենց պետությունում գործող օրենսդրության, Սահմանապահ զորքերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների թոշակային ապահովության եւ զինծառայողների պետական պարտադիր ապահովագրության մասին, ինչպես նաեւ տեղեկության փոխանակում են իրականացնում կենսաթոշակային ապահովության եւ պետական պարտադիր ապահովագրության հարցերի ժամանակին եւ ճիշտ լուծման համար:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: